

**ՈԳԵՀԱՐՑՈՒԹԵԱՆ  
ՄԱՍԻՆ**

Այս բաժնին մէջ պիտի ներկայացնենք ոգեկանչութեամբ զբաղողները:

Կին մը կը գրէ. «Քսան տարի գուշակութեամբ եւ ոգեհարցութեամբ զբաղած եմ: Մարդիկ՝ մէկը միւսին ետեւէն, ինծի կը դիմէին: Կանխագուշակութիւններէս շատերը իրականացան: Աղքատ էի (եւ մինչեւ հիմա ալ դրամի կարօտ եմ) եւ կը կարծէի՝ որ այդ ձեռով շահելուն մէջ որեւէ գէշ բան չկայ: Սակայն, անգամ մը հաւատացեալ քոյր մը այցելեց ինծի եւ խնդրեց, որ ձգեմ այդ շարը, մեղաւոր զբաղումը: Առաւ նաեւ այն գիրքը, որով ոգեհարցութիւն ու գուշակութիւն կ'ընէի: Անկէ ետք շարաթերթով չկրցայ հանգստանալ: Լաց ու կոծով սուրբ երգում ըրի Աստուծոյ, որ այլեւս բնաւ պիտի չկրկնեմ: Ծուռով եկեղեցոյ անդամ դարձայ: Ամուսինս դէմ էր, բայց ատիկա զիս չէր մտահոգեր: Անոր մահէն առաջ անգամ մը հարցուցի իրեն. «Հետս եկեղեցի կու գաս»: Սարսափելի սրբապիղծ խօսքերով պատասխանեց, տեղ մը գնաց եւ տուն վերադարձաւ սոսկալի վիճակի մէջ: Կորսուցուցած էր խօսելու ընդունակութիւնը, բայց մինչեւ վերջին վայրկեանը գիտակցութիւնը տեղն էր: Ծունկի եկայ եւ աղօթեցի Աստուծոյ, որ ներէ իր մեղքերը: Աղօթքս լսելով ամուսինս լացաւ եւ այդ վիճակով գնաց դէպի յաւերժութիւն: Իր մահէն ետք, բազմոցիս տակէն յաճախ կը լսէի...»

**Շարունակելի**

Փշալից ցանկապատը կ'արգիլէ յափըշտակողները այգի մտնել ու անոր պտուղները փճացնել: Նեղուկութիւններն ու վիշտերը հոգիներու թշնամիին թոյլ չեն տար մտնել առաքինիին սիրտը ու անոր բարեմտութիւնը կողոպտել: Ով որ կարող է խաչը ուսերուն կրել՝ անոր վայել չէ զայն գետնաքարչ ընել:

Բարիք գործողը չէ որ արժանի է վարձքի, այլ՝ բարիի մէջ համբերութեամբ յարատեւողը, որովհետեւ իսպառ տեւած է համբերութեամբ յարատեւողը: Ով որ ետ կը կանգնի բարիէն՝ որ սկսած է գործել, ըրածը կը փճացնէ եւ յայտնի չէ թէ կրնա՞յ անոնցմէ աւելի լաւ ընել:

Առաքինիին վարձքն ու պարծանքը կ'աճին, երբ կրնայ բարիքներու արդիւնքը տաժանելի վիշտերու մէջ շատցնել, որովհետեւ այն ատեն կը նմանի այն հողին՝ որ փուշերու մէջ շուշաններ կը բուսցնէ, քանզի մարդիկն ալ կը վարմանան ու կը գովեն, երբ փշահեղձ հողը շահեկան պտուղներով լեցուն կը տեսնեն:

Թող առաքինիները չտրամին՝ տեսնելով ուրիշները յաջողութեան մէջ ճոխացած եւ իրենք՝ անյաջողութեան մէջ տկարացած: Անոնք պիտի տրամին այն ատեն՝ երբ տեսնեն որ հարստութեամբ կշտացածները առաքինութիւններու հանդէպ խնամք չունին:

Ձինուորին համար քաջութիւն է ոչ թէ պատերազմ մղելը, այլ՝ թշնամիին յաղթելը:

**ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ**



ՔՈՒ ԽՕՍԵՂ ԽՄ ՈՏԵՐՈՒՄ ԵՆԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս., 119-105)

Ե. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ՝ 25 ՆՈՅՄԲԵՐ, 2012 ԹԻՒ 48

**ՅԻՍՈՒՄ ԳՐԻՍՏՈՒՄ  
ՍԻՆՏԱՐԱՆԸ  
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ  
12.13-21**

**Ա.ՅԻՍՆԱԿԻ**

Ժողովուրդէն մէկը Յիսուսի ըսաւ. «Վարդապետ, ըսէ՛ եղբօրս որ մեր հօր ձգած ժառանգէն իմ բաժինս տայ ինծի»: Յիսուս պատասխանեց. «Ով մարդ, ո՞վ զիս դատաւոր կամ իրաւունքի բաժանարար կարգեց ձեր վրայ»: Ապա դառնալով ժողովուրդին, շարունակեց. «Նայեցէ՛ք եւ զգուշացէ՛ք ազահուլութեան բոլոր տեսակներէն, որովհետեւ մարդու մը կեանքը կախեալ չէ իր ամբարած հարստութենէն»:

Յիսուս անոնց առակ մըն ալ խօսեցաւ եւ ըսաւ. «Հարուստ մարդ մը կար, որուն արտերը առատ բերք տուին: Ան ինքնիրեն կը մտածէր ու կ'ըսէր. Ի՞նչ ընելու եմ, որովհետեւ հունձքս ամբարելու համար շտեմարաններուն մէջ տեղ չմնաց: Այո՛, գիտեմ ինչ պիտի ընեմ: Պիտի քակեմ շտեմարաններս, աւելի ընդարձակները պիտի շինեմ եւ հոն ամբարեմ ցորենս եւ ամբողջ բերքերս: Ապա ես ինծի պիտի ըսեմ. Ո՞վ մարդ, քանի որ երկար տարիներու համար ամբարած հարստութիւն ունիս, հանգիստ ըրէ՛. կե՛ր, խմէ՛ եւ ուրախացի՛ր»: Բայց Աստուած ըսաւ իրեն. «Անմիտ մարդ, այս գիշեր իսկ հոգիդ քեզմէ պիտի առնեն. որո՞նք պիտի մնայ պատրաստածը»: Եւ Յիսուս եզրակացուց. «Նոյնն է պարագան բոլոր անոնց, որոնք միայն իրենց անձերուն համար հարստութիւն կը դիպեն, փոխանակ Աստուծոյ աչքին հարստանալու»:

Ապա Յիսուս իր աշակերտներուն ըսաւ. «Մի՛ մտահոգուիք ձեր ապրուստին համար, թէ ինչ պիտի ուտէք, եւ ոչ ալ ձեր մարմիններուն համար թէ ինչ պիտի հագնիք: Որովհետեւ կեանքը աւելի կարեւոր է քան ուտելիքը, եւ մարմինը աւելի կարեւոր՝ քան հագուստը: Դիտեցէ՛ք ազուաները, որոնք ո՛չ կը սերմանեն, ո՛չ կը հնձնեն, ո՛չ շտեմարաններ ունին եւ ո՛չ ամբարներ, սակայն Աստուած կը կերակրէ զանոնք: Աստուած պիտի չկերակրէ՞ ձեզ, դուք՝ որ Աստուծոյ աչքին թուշուներէն գերազանց էք: Մտահոգուիլը որեւէ ձեռով ձեր կեանքը կ'երկարէ՞: Եթէ նուազագոյն բանը չէք կրնար ընել, ինչո՞ւ ուրեմն ուրիշ բաներով կը մտահոգուիք: Դիտեցէ՛ք եւ տեսէ՛ք թէ ինչպէս կ'աճի դաշտի շուշանը: Ո՛չ կը հիւսէ եւ ո՛չ ալ հագուստ կը կարէ: Հաւատացէ՛ք որ նոյնիսկ Սողոմոն իր ամբողջ փառքին մէջ անոնցմէ մէկուն պէս գեղեցիկ չկրցաւ հագնիլ: Եթէ Աստուած այդպէս աղուոր կը հագցնէ խտոր, որ այսօր դաշտին մէջ է եւ վաղը կրակը պիտի նետուի, ձեզ աւելի լաւ պիտի չհագցնէ՞, թերահաւատներ:



**ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵԻ ԳԻՐՔԷՆ**

**36.1-9**

Եզեկիայի թագաւորութեան տասնչորրորդ տարին, Ասորեստանի Սենեքերիմ արքան յարձակեցաւ Հրէաստանի բերդաֆառանքներուն վրայ եւ գանձեց գրաւեց: Լափշ ֆաղափէն, Սենեքերիմ մեծ գործով մը իր հրամանատարը դրկեց Երուսաղէմ, Եզեկիա թագաւորին հետ բանակցելու: Հրամանատարը եկաւ կանգ առաւ թափիչին արտը տանող նամբուն վրայ գտնուող ջրանցքին վերին աւազանին իջով: Եզեկիայի կողմէ անոր իջով եկան Քեղկիայի որդի Նդիակիմը, որ արքունի հագարապետն էր, հրովարտակներու ֆարտուղար Սոմանը եւ Ասափի որդի Յովաֆը, որ արձանագրութիւն պահող ֆարտուղարն էր: Հրամանատարը ըսաւ անոց.

- «Գացէ՛ք ըսէ՛ք Եզեկիայի.- Այսպէս կ'ըսէ Ասորեստանի մեծ թագաւորը. «Ի՞նչ բանի ապաւինե՛ր ես: Երեսակայութեամբ ու խօսքով պատերազմ կը մղուի՞: Որո՞ւ ապաւինե՛ր ես հիմա, որ ինձի չես ենթարկուի: Եթէ յոյսդ դրե՛ր ես Եգիպտոսին, այդ եղեգէ մականին վրայ, անիկա ջախջախուած է արդէն. անոր կոթնողը կ'իյնայ եւ անով իր ձեռքն ալ կը վիրաւորէ»: Այո՛, ջախջախուած եղեգ մըն է Եգիպտոսի թագաւորը, փարաւունը, եւ այդպէս ալ պիտի ջախջախուի բոլոր անոր ապաւինողները:

**Շարունակել  
Աստուածաշունչէն**

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԱՌԱՋԻՆ**

**ՆԱՄԱԿԷՆ**

**ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՆԵՐՈՒՆ**

**1.1-10**

Մենք՝ Պօղոս, Սիղուանոս եւ Տիմոթէոս, կը գրենք ձեզի՝ թեսաղոնիկեցիներու եկեղեցիին որ Հօր Աստուծոյ եւ Տէր Յիսուս Քրիստոսի կը պատկանի: Շնորհիք եւ խաղաղութիւն ձեզի:

Մեր աղօթքներուն մէջ միշտ կը յիշենք ձեզ եւ անդադար ձեզի համար գոհութիւն կը մատուցանեմք Աստուծոյ: Հօր Աստուծոյ առջեւ միշտ կը յիշենք թէ ի՛նչպէս կեանքի կը վերածէ՛ք ձեր հաւատքը, սէրէն մղուած կը ծառայէ՛ք ուրիշներուն, եւ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի յուսալով՝ ներդութիւններու կը համբերէ՛ք:

Եղբայրներ, գիտէ՛ք թէ Աստուած ձեզ սիրեց եւ ընտրեց, որովհետեւ մեր ֆարոգութեամբ Աստուած իր Աւետարանը յայտնեց ձեզի ո՛չ միայն խօսքով, այլ նաեւ գորութեամբ, այսինքն Սուրբ Հոգիի ներգործութեամբ, եւ կատարեալ վստահութիւն ներշնչեց ձեզի: Դուք լաւ գիտէք, թէ ձեր մէջ ի՛նչպէս ապրեցանք, ձեզի օրինակ ըլլալու համար: Մեզի նմանելով դուք Տիրոջ նմանած եղաք, քանի որ հակառակ ձեր կրած բոլոր ներդութիւններուն՝ Սուրբ Հոգիին պարգեւած ուրախութեամբ ընդունեցիք մեր ֆարոգութիւնը, եւ ձեր այդ ընթացքով օրինակ եղաք Մակեդոնիայի եւ Աֆայիայի բոլոր հաւատացեալներուն: Արդարեւ դուք ձեր օրինակով Տիրոջ խօսքը հոչակեցիք ո՛չ միայն Մակեդոնիայի եւ Աֆայիայի մէջ, այլեւ ամէն տեղ ուր Աստուծոյ վրայ ունեցած ձեր հաւատքին համբար տարածուեցաւ:

**ՀԱՐՈՒՆԱԿԵԼ  
ԸՆԹԵՐՑՄԱՆՈՒԹԻՒՆԸ  
ՄԱՏՈՒՄԾԱՇՈՒՄԵՆ**